

ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլ. Արանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редація «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ Է Ք օ ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Բ Գ Ի Բ Գ Բ Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ և թաղման յանձնաժողովը յայտնում են ընդհանուրի գիտութեան, որ հանգուցեալ քաղաքագլուխ Պ Օ Ղ Ո Ս Ի Ջ Մ Ա Յ Լ Ե Ա Ն Ի համար հոգեհանգիստ կը կատարվի կիրակի օր, մարտի 12-ին, ցերեկվայ 1½ ժամին, վանքի մայր եկեղեցում:

Նիկողայնո Ղազարեան և Մարիամ Մկրտչեան Սամարքանդները, Հիփոսիմէ և Միքայէլ Մկրտչեան Զարդարեանները սրտի ցաւով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին առաջինը իր աներով, երկրորդը, երրորդը և չորրորդը իրանց սիրելի հօր՝ Մ Կ Ի Տ Ի Չ Ա Ռ Ա Ք Ե Լ Ե Ա Ն Ջ Ա Ր Գ Ա Ր Ե Ա Ն Յ Ի մահվան 40 օրվայ հոգեհանգստեան պատարագը տեղի կունենայ քամօյեանց ս. Գէորգ եկեղեցում, կիրակի օրը, մարտի 12-ին, առաւօտեան ժամը 10½-ին:

ԲՈՎԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ
Սկզբունք է թէ դիպուած. Հայերի կուլտուրայան ոյժը և թիւրքաց իշխանութիւնը. Լաւ է ուշ քան երբէք. Եւրոպական մասուլը և հայոց հարցը. Հայկական քննիչ յանձնաժողովը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գրական մրցանակ. Պրոֆէսոր Թարխանովի գործունէութեան քսանհինգամեակը: Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Զվէջարիայից. Նամակ Թիւրքիայից. ՀԵՌԱԳԻՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Սասուն.

ՍԿԶԲՈՒՆԻՔ Է՞ ԹԷ ԴԻՊՈՒՍՏ
Տարեկան 3,000 ռուբլի թոշակ նշանակելը հանգուցեալ իզմայիլեանի ընտանիքին, ինչպէս այդ արեց մեր քաղաքային դուստն, մի բացառիկ, չը տեսնված դէպք է մեր քաղաքային ինքնավարութեան պատմութեան մէջ, նրա ամբողջ գոյութեան ընթացքում:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն
Ս Ա Ս Ո Ւ Ն
ԱՇԽԱՐՀԱՐԱԿԱՆ ԴԻՐԲԸ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ
III
Քննութեան տուրքերը և հարստութիւնները: Մասնաւոր — Անտառները:—Գահուկները:—Լեռնային բուսականութիւնը: Կազ և նրա գործածութիւնը:—Ընկուզենիները:—Հանքերը:—Հողը, նրա որակութիւնը և քանակութիւնը:—Արհեստական արտեր և այլնները:—Հողի պարարտացնելը:

Սասունը մասնաւորի երկիր է: Մասնաւոր իշխում է յուզիս ամառն: Որչափ խոնաւ է օդը, այնքան առատ է մասնաւորն: Նա չէ թափվում իբրև անձրև և ձիւն, այլ կամաց-կամաց, անակատելի կերպով, ծածկում է ծառերի տերեւները, կազի թուփերը: Այն օրերը, երբ պէտք է մասնաւորն նստի առատ կերպով, օդը մաքուր չէ լինում, այլ լցված բարակ մառախուղով, մի տեսակ մշուշով վարագուրված: Մարտի 2-րդը նոյն իսկ փոքր ինչ թրջվում են: Մասնաւոր, կամ ուրիշ անունով կազը անհատական է, թիփի նման, 2—3 սանտիմետր երկարութեամբ: Նրա հաստութիւնը կարող է լինել ձիւն ազդի մի կամ երկու մազի հաստութեան: Կազի թուփերի վրա նա բաւական չօր է. իսկ ծառերի տերեւների վրա, օրինակ, լողիկի վրա, թաց: Կազի թուփերից նրան թափ են տալիս մի շարքի թիփի օր, կամ մազի մէջ և ապա ձեռքով

Մեզ ուրախացնում է քաղաքային դուստրի այդ առատաձեռն նպատար, որի նպատակը, անկասկած, միայն այն չէ, որ հանգուցեալ քաղաքագլխի ընտանիքը ապահով և հանգիստ ապրի, այլ զլիսաւորապէս այն, որ դա նախ մի բարոյական վարձատրութիւն է այն մարդու յիշատակին, որ ամբողջ քսան տարի իր բոլոր ոյժերը նուիրեց քաղաքին, և երկրորդ, մի բարոյական խնայողականը՝ քաղաքային ինքնավարութեան թէ՛ այժմեան և թէ՛ ապագայ ծառայողներին:

Սակայն այս րօպէին, երբ մենք շնորհաւորում ենք մեր քաղաքի ներկայացուցիչներին այդ քայլը, երբ մենք մասնաւորն ենք անում այդ բացառիկ դէպքի վրա, —քանի որ ընդհանրապէս մեր հասարակական գործողներին մեռնելուց յետոյ՝ նրանց ընտանիքները մնում են անխնայ անօգնական, մոռացված, —մեզ հետաքրքրում է այն հարցը, թէ արդեօք դա մի սկզբունք է, որ ընդունում է քաղաքային դուստն, թէ՛

ժողովելով գունդ անում. իսկ ծառերի տերեւներին նրան ստանալու համար՝ լուսնում են ծառերի ճիւղերը տերեւներով հանդերձ և հիւթը ժողովում ամանների մէջ, ուր մասնաւորն կամաց-կամաց նստում է, իսկ ջուրը վեր բարձրանում: Հում մասնաւորն համար չէ և ծանր է ստամոքսի համար: Եփելուց յետոյ մասնաւորն դառնում է մեղրի նման համեղ:

րոկ մի դիպուած, կամ րօպէական յափշտակութեան արդիւնք... Գաղաքային ինքնավարութեան ծառայողը միմյան քաղաքագլուխը չէ, —այդ բարդ կազմակերպութեան մէջ մտնում են հարիւրաւոր ծառայողներ, աշխատակիցներ, սկսած քաղաքագլուխներից, ու պարզապէս անդամներից, մինչև քաղաքային վարչութեան վերջին գրագիրը, վերջին ագէնտը, —որոնցից շատերը նոյնպէս տարիներով նուիրել են և կը նուիրեն իրանց ամբողջ ֆիզիկական ոյժը, մտաւոր ընդունակութիւնները մայրենի քաղաքի ծառայութեան և դրա բարգաւաճման...

Արդ, եթէ վաղը, կամ մի քանի տարուց յետոյ մեռնի քաղաքային ինքնավարութեան մի ուրիշ պաշտօնեայ, մի ուրիշ ծառայող, մի ուրիշ նոյնպէս անձուկը աշխատակից, —արդեօք մեր դուստն իր պարտքը պիտի համարէ՞ նրանց ընտանիքներին ևս ապահովել, նրանց էլ բարոյական խնայողաց ցոյց տալ:—Թէ պէտք է բաւականանայ մի քանի րուբլի տալ նրանց թաղման համար, և մի քանի րուբլի էլ միանուազ նպատ, պատճառ բռնելով թէ կամ քաղաքը փող չունի, կամ թէ միմյան քաղաքագլուխն է արժանի վարձատրութեան, իսկ երկրորդական ծառայողները ոչ:

Կրկնում ենք.—արդեօք արդարեւ մի հարց տուցին իրանց մեր քաղաքի ձայնաւորները այն րօպէին, երբ վճարում էին իզմայիլեանի ընտանիքը ապահովութեան խնդրը. արդեօք այդ նրանց համար մի սկզբունք էր, որը ընդունեցին, թէ լոկ մի պատահական էր, լոկ րօպէական յափշտակութեան արդիւնք... Նթէ դա մի սկզբունք է, որ մեր դուստն ընդունեց, վճարելով առատօրէն ապահովել մեր մունիցիպալիտատի ծառայողների ընտանիքներին, սկսած ամենամեծից մինչև ամենամիջոցը, այն ժամանակ մենք խօսք չենք գտնում գովելու այդ գե-

ղեցիկ մարդասեր, խնայի քայլը... Իսկ եթէ լոկ մի դիպուած, կամ րօպէական յափշտակութեան արդիւնք է, —այն ժամանակ մեզ մնում է յիշեցնել կովկասի մայրաքաղաքի դուստրին՝ որ բացի քաղաքագլխից, կան բազմաթիւ աշխատակիցներ, որոնց ապահովել և խնայողութեամբ նոյն քաղաքային ինքնավարութեան սրբազան պարտքն է:

ՀԱՅԵՐԻ ԿՈՒՆՏՐՈՒԿԱՆ ՈՅԺԸ ԵՒ ԹԻՐԻՔ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Անդրկական լրագրիներում տպագրված է պրօֆէսոր Թուրանյանի մի յօդուածը, որի մէջ յայտնված են մի շարք հիմնաւոր մտքեր հայերի կուլտուրական ոյժի և թիւրք կառավարութեան քաղաքականութեան մասին: Առաջ ենք բերում մի քանի կէտեր:

Արդէն տան տարուց աւելի է, ինչ թիւրքերը սկսեցին նկատել, որ Հայաստանի քրիստոնեայ ազգայնականութիւնը առաջադիմում է, թուով անում է և որ նրա ազդեցութիւնը նկատելի կերպով մեծանում է այնտեղ: Վճարված էր ամեն միջոցներ գործ դնել արդեօք դնելու քրիստոնեաների այդ առաջադիմութեանը, և ճնշման քաղաքականութիւնը ուղղված էր հայերի դէմ այն պատրուակով, որ նրանք ընդունակ են ապստամբվելու:

Հայերը յայտնի իրաւունքներ ունեն Բերլինի դաշնագրի և Կիւրոսի պայմանագրի համաձայն, բայց որովհետեւ ժողովրդին իրանց իրաւունքները և թիւրքաց կառավարութեան յանձն առած պարտաւորութիւնները բացատրել կարող են միայն կրթված մարդիկ, այդ պատճառով թիւրքաց կառավարութիւնը ամենալաւ միջոց համարեց երկիրը խաղաղացնելու համար բանտարկել քիչ շատ կրթված մարդկանց, մեղադրելով նրանց յեղափոխական պրօպագանդայի մէջ:

մէջ: Գարունը բացվելուն պէս, երբ հողիւ ձիւնը հալվում է, բուսանում է օղիւնը, որ ժողովում են դաշտերից, եփում և ուտում: Օղիւն արմատը շրջիկ է, որ գործ է անվում մանածի համար, իբրև սոսնձանման նիւթ:

Անոթը սարի կողմերում շատ է բուսում խաւըրժիլ բոյսը որ ունի լայնատարած մեծ տերեւներ և ուղղաձիգ երկայն գոյն, որ վերջանում է մի փոքրիկ թուփով: Խաւըրժիլ ժողովում են և ուտում:

Սասունի լեռներում, նամանաւոր արեգունի տեղերում, շատ է բուսում կազ, որ թիփանման փուշ է և գործ է անվում իբրև վառելիք, բայց մասնաւոր իբրև կենդանիների համար կերակուր: Կազ փուշը (Astragalus), ինչպէս յայտնի է, տարածված է և Անդրկովկասում, նա մասնաւոր իբրև նահանգում. բայց Սասունի կազը աւելի խոշոր տեսակիցն է և բուսում է շատ մեծ քանակութեամբ: Կազի խոշոր տեսակի թիփերը այնքան մեծ են, որ երբեմն մի թուփը արդէն կազվում է մի չալակաբեռն. իսկ ընդհանրապէս 8—10—12 հատ թուփն է կազվում մի չալակ: Կազը ունի գեղեցիկ մանիլակաթոյն և դեղին ծաղիկներ, որոնք թաղված են փուշերի ծոցում: Այդ ծաղիկները համեղ կերակուր են ոչխարների համար: Կազ կտրտելու համար գործ է անվում դարձեալ բշուշ, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի հատոց կամ մի հատոց դասակ կեռ ծայրով: Կազը նախ վառում են և փշերի մասերը այրում, յետոյ մնացածը՝ բունը և ճիւղերը կտրտում են շատ մանր կտորներով և ապա տալիս են կենդանիներին, իսկ բաւ մեծի մասին կտրտելու երկայնեան ժուլիս կազը մեծ ոյժ է տալիս եղջերին, չա-

ծի համար: Տերեւի պատրաստութիւնը կատարվում է օգոստոսին և սեպտեմբերին, երբ գիւղացիները վերջացնում են ամառային պարապմունքների մեծ մասը: Գիւղացիները այդ ժամանակ խմբերով գնում են անտառ և ջրաւշով կտրտում են ճիւղերը ու գետնին թափում: Յետոյ այդ ճիւղերը խորձ-խորձ կապում են և թողնում գետնի վրա մօտաւորապէս մի տասն օր, որ ճիւղերը և տերեւները չորանան: Այնուհետև դեղ են անում այդ խորձերը և այդպէս պահում մինչև ձմեռ, երբ պէտք է ոչխարին և այծին տանել կերակուր: Այդ ժամանակ գիւղացիները առնում են իրանց հետ դահուկներ, որ բալիւրների նմանութիւն ունեն (ուստական ԴՐՈՅՆԻ և ՏԱՅԻՆԻ ձևով) և անտառից տուն կրում ճիւղի և տերեւի խորձերը: Ձիւնի վրայով դահուկները շատ թեթեւ են շարժվում և մարդիկ, առանց կենդանիների օգնութեան, իրանք կարողանում են առանց մեծ դժուարութեան տուն բերել խորձերը: Ոչխարները ուտում են տերեւները և շատ բարակ ընձիւղները: Մնացած ցախը գործ է անվում իբրև վառելիք:

Լեռնային բուսականութիւնը բազմազան է և հարուստ: Շատ տեղերում նա այնքան ճոխ բուսում է, որ նրան ճնձում են իբրև խոտ և չորացնում. իսկ յետոյ նոյն հողի վրա արածացնում են անասուններին: Երբեքուկով (Trifolium—խմբ. ձորախոտ) ծածկված արօտները սննդաբար կերակուր են մատակարարում կենդանիներին: Կապիլո (ուպին) բոյսով առատ տեղերի խոտը պահվում է ոչխարի, այծի, ճնձած մաքիների համար:

Լեռներում և դաշտերում շատ բոյսեր կան, որոնք գործ են անվում և մարդկանց կերակուրի

Անտառի փայտը ծառայում է իբրև վառելիք, իսկ ծառերի տերեւները իբրև կերակուր անային կենդանիների, զլիսաւորապէս ոչխարի և այ-

«Մահաբանները ատելութիւնը դէպի հայերը միմիայն նախանձով կարելի է բացատրել: Մարտեվանի այն թաղում, ուր ես անց եմ կացել իմ մանկութեան օրերը, բոլոր անշարժ կալուածները, նոյնպէս և այն տունը, ուր ապրում էին իմ ծնողները, պատկանում էին թիւրքերին, իսկ այժմ այդ բոլորը պատկանում է հայ քրիստոնեաներին:»

«Ամբողջ արդիւնաբերութիւնը և առևտուրը գտնվում են նրանց ձեռքում: Գուք չէք տեսնի ոչ մի մահաբանական հայապաճառ, դերձակ, հողակար, որմնադիր: Այդ բանը թիւրքերի նախանձն է շարժում և կողոպուտի ցանկութիւն է յայտնվում նրանց մօտ:»

«Քրիստոնեաներին բանտն են նետում և, փրկանքի պատրաստով, խլում են նրանցից նրանց վերջին կօպէզը: Պաշտօնականները կաշառակեր են, որոնք զբաղվում են և է զբաղվում զէպի հայրենիքը և ժողովուրդը—ծիճադիր է: Քրիստոնեաներին մեղադրում են ապստամբութեան կամ յեղափոխական պրօպագանդայի մէջ՝ սուլթանին դիրք գալու համար և նրանց դրամական պարզ և ստանալու նպատակով: Արդարադատութիւն գտնել քրիստոնեայի համար անհնար է: Բարձր պաշտօնականները պաշտպանում են ստորին պաշտօնականներին, և օրինակ չէ եղել, որ պատժված լինելը մի ամենաստորին պաշտօնային, ինչքան էլ մեծ լինէին նրա յանցանքները:»

«Իրա վրա աւելացրէք և այն, որ երկիրը լին է լրտեսներով, և երկիրը լին է խօսակ միջնակ անգամ բարեկամների հետ: Բաւական է, որ պաշտօնական տեսնի երկու հայերի շուկը, և ահա նրանք արդէն դատաւարներ կը նկատվեն և բանտը կը նետվեն:»

«Ճիշման այդ բաղաբանութեան հետևանքն էին Սասունի անցքերը: Կառավարութիւնը հաւատարմութեամբ է մահաբանական ազդեանքները, որ քրիստոնեաները ապստամբվում են, և պէտք է նրանց խաղաղացնել զէպի ոյժով: այդպէս էր Մարտիկանում, Ամասիայում, Յէպարէի մօտ, Սիվասում—1894 թվի սկզբում, նոյն բանը պատահեց մեծ չափով Սասունում անցեալ տարվայ աշնանը:»

ԱՄԻ Ե ՌԻՇՆ՝ ԲԱՆ ԵՐԲԵՒ

Ազգրան պատրիարքը, ինչպէս երևում է «Մշակի» անցեալ համարում ապագրած թղթակցութիւնից, սկսել է խելքի գալ:

Պատմութեամբ ամրացնում նրանց: Կովի և ոչխարի համար նա նոյնպէս օգտակար է, իբրև կաղաթուղի կերակուր, բայց կաթի յատկութեանը վրանասում է. կաթը ստանում է մի առանձին դասութիւն: Նկատվում է, որ կաղ շատ ուտող կենդանու ստան էլ ունի դասն համ:

Կաղից ստացվում է մի առանձին տեսակի խեծ, որ յայտնի է կաղի խեծ անունով: Սասունցիները առանձին ուշք չեն դարձնում այդ խեծի վրա. մի քանի մարդիկ միայն զբաղվում են նրա ժողովելով և ծախում են գիւղերում կամ Մուշում նուկին 1½ դուրը, լիտրը 18 դուրով:»

Օգտվում ենք զէպից յայտնելու, որ կաղիները լաւ դին ունի եւրօպական շուկաներում և զեղատներում և եթէ սասունցիների մէջ գտնվին մարդիկ, որ առանձին ուշք դարձնեն այդ խեծը ժողովելու գործի վրա, կարող են յայտնի շահ ունենալ: Վաճառքի մէջ այդ խեծը յայտնի է թրազանթ անունով (Gummi Tragantha):»

Կաղի թուփերը կարատելուց յետոյ, արմատից զտարութեամբ են վերականգնվում: Բայց սերմերից շատ չուտ նրանք արմատ են բուսում և զարգանում:

Սասունի գիւղերի այգիներում, ձորերում շատ վաղ ժամանակից բուսնում է ընկուզենի, որի կոճղերը վերջին ժամանակներս դարձրին իրանց վրա եւրօպական վաճառականների ուշադրութիւնը: Եւրօպացիները արդէն սկսել են արտահանել այդ կոճղերը: Նոյն իսկ մի քանի տեղերի անտառներ ցոյց են տալիս, որ այդ երկրում ընկուզի շատ կաղ: Վերջին կոտորածի ժամանակ մեծ հաշակ ստացած դիւզի անտառ, Գեղիկոտան գրան նշանակում է քրիստոնե լեզուով ընկուզաձոր: Եւ յիրաւի, Գեղիկոտանում շատ կան ընկուզենի:

ձմարիտ է, մի փոքր արդէն ուշ է, և դժուար է մոռացնել տալ հայ հասարակութեանը այն ծանր ապաւորութիւնը, որ դորձեց Ազգրանի բռնած ընթացքը.— բայց լաւ է ուշ, քան երբէք:

Հայ-կաթօլիկների անհեռատես և փառամոլ պատրիարքը, որ իր աշտուղիները մեծութիւնը և փառքը որոնում էր հայոց հայրենի դիմադրելու և կրօնով տարբեր բայց նոյն ազգութեան պատկանող մարդկանց մէջ լինումը, սթափվեց, և փորձում է սրբել այդ արտաք, առաջարկելով հայ-կաթօլիկներին հաշտ ապրել հայ-լուսաւորչականների և հայ-բողոքականների հետ, առաջարկելով առաջնորդներին արձանագրել թիւրքաց հարստահարութիւնների զէպերը և իրան հաղորդել: Գա մի յաղթանակ է, որ տարաւ հասարակաց կարծիքը դա մի բարոյական ճնշում է, որին չը դիմացաւ նոյն իսկ Ազգրան, չը նայելով չուսով պապի և թիւրքաց սուլթանի աջակցութեան... Ով գիտէ, գուցէ Ազգրան յետոյ մտքեր ունի, գուցէ փոխելով իր ընթացքը նա իր սրտի մէջ թաղցրել է գանազան դիտաւորութիւնները.—բայց դա մեզ համար մի և նոյն է: Մենք մեր առաջ ունենք ապացոյց, թէ ինչպէս հասարակաց կարծիքի բուն ազդեցութեան տակ Ազգրան սկսել է փոխել իր ընթացքը, սկսել է բողոքողի տարբեր մտքով շրջաբերականներ հրատարակել.— և այդ արդէն մեզ ուրախացնում է: Եթէ նա նորից կը փորձէ դաւաճանել, խաբել, օտարի գործիք դառնալ,—մենք նորից կը պոկենք նրա կրեւից զլուսկը...»

ՅԵՐՈՍՈՒՄԱՆ ՄԱՍՈՒՆԻ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԱՐՏԸ

Լոնդոնի «The Daily Chronicle» լրագրի մարտի 7 և 9-ի համարներում տպագրված է մի մշակված յօդուած Սասունի զէպերի մասին, Նաղարէդ ստորագրութեամբ:

«Վերջին ոռոտ-թիւրքական պատերազմից ի վեր, ասում է յօդուածագիրը, այդինքն հայոց հարցի զոյգութիւնը ի վեր, ոչ մի ժամանակ եւրօպայի ուշադրութիւնը այնքան յամառ և լուրջ կերպով չէր դարձված Հայաստանի վրա, ինչպէս ներկայումս: Իրա պատճառը.—Սասունում կատարված գաղտնութիւններն են:»

«Մինչև այժմ էլ եւրօպայի ամենալուրջ և ամենաազդեցիկ լրագիրները սրտակեանքով շարունակվում է Սասունի կոտորածի մանրամասնութիւնների նկարագրութիւնը: Այդ լրագիրների յօ-

դուածները ընդհանրապէս շատ համակրական են հայերի վերաբերմամբ, բայց հայոց խնդրէ լուծուած մեծ մտադանութիւն է պատճառում շատերին, որովհետև այդ խնդրը եւրօպայի խաղաղութեան վտանգ է սպառնում:»

«Մենք հասկանում ենք այն համակրութիւնը և հետաքրքրութիւնը, որ անգլիական մամուլը և անգլիական հասարակութիւնը տածում են դէպի հայոց ազգը և շնչում ենք այն իրողութեան վրա, որ անգլիական մամուլի մէջ շատ քիչ կատարված է յայտնվել մինչև այժմ Սասունի կոտորածի ճշգրտութեան մասին, որովհետև այն աղբիւրները, որտեղից ըլխում են այդ լուրերը, նկատված են իբրև արժանազան: Սակայն մեզ հասկանալի է և այն, որ մի քանի անգլիացիներ զտարութեամբ են հաւատում այդ լուրերին, որովհետև, իսկապէս, դժուար է հաւատալ, որ տասնիններորդ դարում, գրեթէ եւրօպայի սրտում գտնվող մի պետութիւն, որ մի և նոյն ժամանակ համարվում է և եւրօպական մեծ պետութիւնների բարեկամ, թող տար այդպիսի մի բարբարոսական գործ, կոտորածի այնպիսի սարսափելի տեսարաններ:»

«Բայց, այո, փաստերն իրանք իրանց համար են խօսում, նրանք, սարսափով և արհեսով լինելով ձախտարարիս են, քան մեր խօսքերը: Բայց միայն Սասունի կոտորածի զէպերը չեն, որոնք մենք կը ցանկայինք պատմել: Սասունի զէպերը միայն լցրին հայերի թշուառութեան բաժակը, որը նրանք քանդում են շատ ժամանակից ի վեր:»

Այս յօդուածագիրը պատմում է մի առ մի թէ Սասունի կոտորածի մանրամասնութիւնները, և թէ այն հարստահարութիւնները, որոնք ենթակայ են հայերը քրիւղերի և թիւրք կառավարութեան կողմից և որոնք ծանօթ են արդէն «Մշակի» ընթերցողներին:

Յօդուածագիրը վերջացնում է իր յօդուածը արտաբերով, որ ինքն պատրաստ է և կարող է քննիչ յանձնաժողովի առաջ՝ պատմած բոլոր իրողութիւնները հաստատել փաստերով և ակնատես վկայներով:

ՀԱՅԿՍՏԱՆԻ ԲՆԻՆԻՉ ԹԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Լոնդոնի «Daily Telegraph» լրագրի թղթակիցը հաղորդում է հետևեալ նոր մանրամասնութիւններ քննիչ յանձնաժողովի գործունէութեան մասին:

«Սասունի ազգաբնակչութեան կենդանի մնացած մասից պատգամաւորութիւններ ներկայացան քննիչ յանձնաժողովին Մուշում և գրեւոր տեղեկագիր տուին նրան այդ դատարան պատահած զէպերի մասին: Այդ տեղեկագիր համեմատ, զա-

Արհեստական արտ կամ այգի շինելու համար սասունցիներ ընտրում է լեռնային լանջերից յարմար՝ ջրելու և երթեկից համար: Այդ լանջերի ներքին կողմից որմն է բարձրացնում քար ու ցեխով, երբեմն էլ քար ու կրով: Յետոյ այդ զաւիւլայրի ներքին մասում այնքան քար են կրում, որ հաւատարմի հողի մակերեսովը Այնուհետև այդ քարերի վրա անում են խիճ, առաջ հող, գետակների ափերից խոտախառն հող, ձուճը և յետոյ պարտաւարում այդ հողը արքունի: Միշակ տունը ունի 20—30 քերտեղ հող, չքաւորը 5—15, հարուստը 40—60, բացառիկ ունեւորները և աւելի: Քիլան ութ կող է: Այդ հողով պէտք է սասունցի բաղանդում ընտանիքը կերակրել մարդը տարին և կարողանայ իր տուրքերը հատուցանել:

Սասունի հողը ըստ մեծի մասին թողլ, աւազախան տեսակիցն է: Նրան հերկելը մեծ ոյժ չէ պահանջում: Հողը առհասարակ կարմիր և դեղին գոյն ունի, քրդական խօսքով կալիդի: Հերկում են 2—3 վերջով խորութեամբ: Մեծ գուլթաններ այտեղ գործ չեն անում: Հերկում են արօրով, որ պահանջում է միայն մի լուծ, այսինքն մի գոյգ եղ:

Սասունի հողը դարեր շարունակ մշակութեան մէջ լինելով, ուժասպառ է եղել և պահանջում է մշտական պարտաւարացում: Վարկահողի քանակութիւնը համեմատաբար մեծ չէ և այդ հողը երբէք չէ հանդուստանում, այլ անդադար մշակվում է: Հող պարտաւարացնել յայտնի է այնտեղ ու ժ ել բառով: Ուժեղու համար գործ են անում կենդանիների աղբը: Պէտք է նկատել, որ Սասունում վիայի առատութեան պատճառով, աղբից ա-

նազան հայանակ գիւղերում թիւրքերի ձեռքով այրված են 1357 տուն, 16 եկեղեցի և 8 ուսումնարան:

«Հայերի զեկուցումը մեծ տպաւորութիւն թողեց յանձնաժողովի անդամների վրա: Ինքը թղթակիցը և իր օգնականները հարցրել են 200-ից աւելի վկաներ, այդ թուումն են շատ քրիւղեր և թիւրք ուսուցիչները: Իրանց ցուցմունքներին հիման վրա նա հերքում է այն կարծիքը, իբր թէ հայերն են եղել անկարգութիւնների ըսկզբնապատճառը: Աւելորդ են 40 գիւղեր:»

«Մուշի միջազգային յանձնաժողովը գործում է չափազանց դանդաղ: Մինչև վերջին ժամանակը նա հարց ու փորձի է ենթարկել ընդամենը 28 վկաներին: Նա հասել է արդէն այն կէտին, որ անհրաժեշտ է համարում քննութեան առարկայ դարձնել թիւրք զենեարկների գործողութիւնները: Յանձնաժողովի թիւրք անդամների և եւրօպական զեկուցանների մէջ տեղի են ունենում շատ լուրջ ընդհարումներ: Առաջինները ամեն ջանք գործ են դնում, որ ամբողջ յանցանքը գցեն քրիւղերի վրա:»

ՆԵՐՍԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿ

Ներսիսեան զպրօցի հոգաբարձութիւնը ստացել է Սիմֆերօպոլի նահանգական դատարանի պրօկուրօրից հետևեալ տեղեկութիւնը: «Պերսիկայ զաղբը վաճառական Լազար Բերբերեան թողել է կտակ, որի մէջ, ի միջի այլոց, ասված է հետևեալը. «Հանգուցեալը նշանակում է գրականական երկու մրցանակ՝ 300 և 200 բուրջու: Մրցանակները պէտք է տրվին իւրաքանչիւր երեք տարին մի անգամ: Առաջինը հայոց պատմութեան և գրականութեան վերաբերեալ գրուածքների, երկրորդը ժողովրդական կամ մանկական ընթերցանութեան գրքերի համար, հայերէն լեզուով: Մրցումն յայտարարել և մրցանակ նշանակելը յանձնվում է Ներսիսեան զպրօցի հոգաբարձութեան և մանկավարժական ժողովի ընդհանուր վճիռն:»

Հանգուցեալ Լազար Բերբերեան մի այդպիսի գովելի գործ կատարելով, չէ յայտնել իր կտակի մէջ, թէ որտեղ պէտք է պահվի, կամ ում մօտ պէտք է գտնվի այն դրամադրութիւնը, որի տոկոսները պէտք է կազմվեն մրցանակները: Կամ գուցէ կտակի մէջ կայ, իսկ նահանգական դատարանը այդ մասին օչինչ չէ հաղորդել Ներսիսեան զպրօցի հոգաբարձութեան:

Բայց օրպէս զի Ներսիսեան զպրօցի հոգաբար-

թանքը չեն պատրաստում վաճառու համար, այլ բացառապէս նրան գործ են անում հող ուժեղու համար: Ամենայն օր երկու անգամ գիւղացիները սրբում են իրանց գոմերը և աղբը դուրս տանում ու դիզում մի տեղ, մինչև ձմեռվայ վերջը և գարունը, և այն ժամանակ կրում են դէպի արտերը: Եթէ ձիւրը դեռ չէ անցել, աղբը կրում են դահուկներով դաշտ՝ այնտեղ թողնում մինչև վաղելու ժամանակ. իսկ եթէ գարունը բացվել է, այն ժամանակ կրում են կողովներով բարձած էշերի վրա: Ի հարկէ, դահուկներով կրելը աւելի դիւրին է և արագ: Վարելու միջոցին աղբը ցրվում են հողը վրա հաւասարապէս և ապա հերկում հողը և ցանում: Պարբերի հաւասար տարածվելուն վերջնականապէս նպաստում է ջուրը, որով ոռոգում են դաշտերը:

Կայ հող ուժեղու և մի այլ միջոց, որ նոյնպէս յամար գործ է անվում այստեղ: Այդ այն է, որ գիւղացին մի 20—30 օր գիշերել է տալիս իր անասուններին այս կամ այն արտի վրա, յետոյ անցնում միւս արտին: Կենդանիների դաղաբից գոյացած պարբեր այնքան զօրութիւն է տալիս հողին, որ այլ ևս պէտք չէ զգացվում այլ կերպ ուժեղու:

Սասունում վարկահողերը և այգիները ըստ մեծի մասին ջրվում են և այն էլ մի քանի անգամ, բուսականութեան անման չըջանում՝ երեք, չորս և հինգ անգամ:

Այն տեղերում, ուր հողը չէ հերկվում և թողված է խոտի համար, ոչ ջրում են, ոչ ուժում: Անձրևների խոտաւորութիւնը բաւականութեամբ է տալիս բոյսերի անման: այլ յիշակալիս կրում են զգուշացնել իրանց հողը: Ա. Բ.

ՆԱՍԱԿ ԹԻԻՐԻՒՄՆԵՐ

Տրայիդոն, փետրվարի 27-ին
Լուր կար, որ թիւրք կառավարութիւն հրա-
հանգ տուած է թիւրք ամբողջին քրիստոնեաներու
հետ անուշաբանք վարուելու համար:

Այդ լուրը ճշդեց, տեղոյս Չարչու-ճամի-
սի կոչուած մեծ մզկիթին մէջ պաշտօնապէս
քարոզ խօսուած է այդ առթիւ, մասնաւորապէս
հայերու հետ սիրով ընթանալու համար: Բայց
թիւրք խուժանը կրնայ իր ֆանատիկութիւնը
զսպել, սա հրաշք պիտի լինէր:

Մեծ-պահլան առաջի երկուշաբթի օրուան հե-
տեակ օրը սկսաւ թիւրքերուն յայտնի բա-
ժանան ամբողջը, ինչպէս յայտնի է, տաճիկ
ժողովուրդը ցորեկները ծոմ կը պահէ և գիշերնե-
րը միայն կը ճաշէ: Ամեն տաճիկ ամբողջ տար-
վան մէջ բամբակներ գիշերներուն կը սպասէ
անձկութեամբ, այդ գիշերներու մէջն է, որ պի-
տի ընէ նա իր ամեն կերակուրանքը, գինովու-
թիւնները, սրկիւթիւնները ու լիտիւթիւննե-
րը՝ լոյսի խիտ ստուերին տակ:

Հայաստանի ներքին գաւառներն եկող հայ
ճամբորդ գրեթէ չենք տեսած շատոնց ի վեր:
Պատճառը, որովհետև կառավարութիւնը խիստ
արգելքներ կը յարուցանէ թող չի տայու համար,
այն վախով թէ ատորք կրնան ամեն տեսանին,
զգայածին հաղորդել արտասահմաններու:
Ժողովուրդը սարսափած մնացած է: Ինչ ընէ, իր
զլիւտն ճարը նայելու համար զարիպութեան
եկել կուզէ թող չեն տար: Եթէ ուզէ իր հայ-
րենիքին մէջ աշխատել իր ճակտի քրտինքի ար-
գիւնքին չնչին մասը անգամ իրեն չի մնար, չի
կայ նոյն իսկ կեանքի ապահովութիւն: Այս
դժուար պայմանն և բոլոր տակ ինչ կերպ կրնայ
շարժիլ... Ամեն սրտերու մէջ դառնութիւնը բոյն
դրած է, այս անտանելի հանգամանքներուն մէջ
մահը կեանքէն զերազաս կը համարեն. յուսա-
հատութիւնը տիրել է ամեն կողմ, ամեն բերան
տրտունջ կը յայտնէ ներկայ կարգերուն դէմ, ո-
րոնց փոփոխումը անհրաժեշտ կը համարուի...

Կրտսի թէ ներքին գաւառներում կառավար-
ութիւնը սկսած է լաթի ֆինները (պահեստի
զինուոր) հաւաքել և լուր կայ թէ այս կողմերն
ալ պիտի սկսին ժողովել. բայց հրքան ստոյգ
ըլլաւ զեռ յայտնի չէ:

Գ-ին

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 9 մարտի: Այստեղ է գալիս
կուսակցական զուգը:
ԲԵՐԼԻՆ, 8 մարտի: Կայսրը կերթայ մարտի
14-ին Ֆրիդրիխսբուրգ՝ իշխան Բիսմարկին այցե-
լելու համար:

«National Zeitung» հաղորդում է, որ մտադրու-
թիւն չը կայ գինորական բարձր պաշտօնեա-
նորից մէկին Պետերբուրգի գերմանական զեւսպան
նշանակել: Այդ պաշտօնի համար Հերբերտ Բի-
մարկին նշանակելու լուրը սխալ է:

Հելսինկնիքում, պրուսական և հոլանդական
սահմանի մօտ, մի նաւի վրա զինամիտի պայթիւն
տեղի ունեցաւ: Հետեանքները սարսափելի են.
ինքն նաւը խորտակեց, միւսը արվեց. մօտիկայ
տեղերում տները փռւլ եկան օդի սարսափելի
ցնցումի ոյժից. բոլոր շրջակայ քաղաքներում և
տեղերում ապակիները շարժվեցին. քիչ վնաս
չէ հասցրւած: սպանվեցին մօտ 25 մարդիկ:

ԼՈՆԴՈՆ, 9 մարտի: Տիւնիսիայի հեռագրում
են, որ Տակուի մօտ 4 զինուորական նաւեր երես-
ցին, որոնք զինուորական մարտանկողութեան ա-
ռաջն առնելու համար, սկսեցին քննութեան են-
թարկել առևտրական նաւերը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 մարտի: Կայսրուհի Մարիա
Ֆեոդորովնա ճանապարհ ընկաւ Գանիա, ուր կը
մնայ կարճ ժամանակով:

ԲԵՐԼԻՆ, 9 մարտի: Հրատարակված է զեւսպան
վերջերի յետ կանչելու մասին, ծառայութիւնից
հրաժարական տալով:

ԼՈՆԴՈՆ, 8 մարտի: Սիմոնսէկից հաղորդում
են, որ եսպանական և չինական ղէլէգատներին
մէջ բանակցութիւններ սկսվեցին՝ խաղաղութեան
դաշն կապելու մասին:

Տոնիկից ստացված տեղեկութիւնների համե-
մատ, եսպանացիները ուրբանոմ են Տամոյուրի,
Ֆորմոզա կղզու վրա:

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԳՐՈՒ Լայ գինորներին. Չեղ համար տարվայ
սկզբից արդէն «Մշակ» ուղարկվում է, տուած

հասցէով: Ուրեմն ինչ է պատճառը, որ այդ մա-
սին դուք տեղեկութիւն չունէք:

ՉԵՐՆՈՎՈՎ. Ա. Ղ. Շատ ցատում ենք, որ ձեր
վերջին յօդուածը չենք կարող տպագրել:

ՄՍՍԿՎԱ. Բ. Բ. Չեր ուղարկած փողի մասին
արդէն տպագրված է «Մշակի» մէջ:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. Յ. Գ. Չեր թղթակցութիւնը
տպագրութեան համար անյարմար գտանք: Ուրա-
խութեամբ ընդունում ենք ձեր սիրալիր առա-
ջարկութիւնը:

Խմբագիր՝ ԱԼԷՔԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻԻՐ-ԱՂԱՄԱԼԱՆՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ
ՀԻՒԱՆԳԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուկիա, վարձուցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի
կիրակի օրերից:

ԱՌԱՌՕՏԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վիրաբու-
ժութեան, սիֆիլիս և վնասուածքների հիւանդու-
թիւնների:

Գ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեար-
դալի:

Կ. Գ. ՐՈՒԿՈՎԱՍԿԻ—10—11 ժ. ներքին, երե-
խաների և կանանց:

Կին-բժշկ ՏՈՒՐՈՎԻԿ—11—12 ժ. կանանց հ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻԿ—11—1 ժ. սկսնչի, կո-
կորդի, քեթի և կրծքի:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ—1—1/2 ներքին և երե-
խայոց:

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՐԿԻՍ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէղի և
սեռական օրգանների:

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—7—7 1/2 ժ.
Ի. Ե. ՖԻՐԱՆՅՈՒՍ—7—7 1/2 ակնաչի, կոկորդի,
քեթի և նեարդալի: Երկուշաբթի, չորեքշաբ-
թի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՐԿԻՍ քիմիական և խոշորացուցական
հետազոտութիւններ է անում մէղի, խիլի, ա-
րեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համալսարանի (կոսպիլումի) ց
օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցումը
ընդունվում են և ԳԻՆԵՐՈՒԹԻՒ ՀԻՒԱՆԳՆԵՐ:
Հիւանդանոցի վերաբնութիւնը:
Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ: (№ 72)

Հողերի իշխանութեան կարգադրութեամբ
առաջիկայ կիրակի, մարտի 12-ին, առաւօ-
տեան 12 ժամին, սուրբ պատարագից յի-
տայ պիտի կատարվի ՄՈՂՆՈՒ Ս. ԳԵՐԳ.
ԵՒ ՏԱՓԻ-ԹԱՂԻ Ս. ԳԵՐԳ. եկեղեցիների ե-
րեցփոխանների և հաշուատեսների ընտ-
րութիւնը, ուստի նոյն եկեղեցիների ծխա-
կան ժողովուրդները հրաւիրվում են նշա-
նակել օրը իրանց եկեղեցիները՝ ընտրու-
թեան մասնակցելու համար:

Տիփլիսի ա. մ. եկեղեցիների գործակալ՝
Դիւտ քահ. Արանեանց
(№ 25) 1—2

ՊՄԱՌՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ՝
(Հայոց թագաւորների պատկերներ)
Գինը 10 հատը—6 բուրլի:

ՀՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ՝
(Ուսանկար, չափը 12 վերջով)
Գինը 10 հատը—15 բուրլի, 5 հատը—
8 բուրլի, հանդերձ ճանապարհածախսով:

Յանկացողը կարող է ստանալ ՆԱԼՈՒՆԻ
ՊԼԱՏԵՍՈՎ:
Հասցէս. МОСКВА, армянск. перк. ИВ.
ГЕЧЕВЪ. (№ 27) 2—5

ՀԱՅՈՒՆԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴ-
ՀԱՆՈՒԿԻ ԺՈՂՈՎԸ, որ նշանակուած
էր ներկայ մարտի 12-ին, ՅԵՏԱԳՈՐԾԻ
է մինչև նոր կարգադրութիւնը: 1—1

Կենտրոնական գրադաճարանցում վաճառ-
վում են
ԼԵՒՈՆ՝ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

1. ԱՅՑ ԹԻՐԻՐԱՅՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ . 60 կ.

2. ԺՈՂՈՎԻԿԻ ԿՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ. 20 կ.

5—10

ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՆԿԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Երեքշաբթի, մարտի 14-ին

Հայ դերասանական խմբի անդամները կը տան մի գրական-դրամատիքական երեկոյթ:
Կը ներկայացնեն

Մ Ե Ծ Ա Պ Ա Տ Ի Մ Ո Ւ Ր Ա Յ Կ Ա Ն Ն Ե Ր

Կատակերգութիւն 3 արար. Հեղ. Պարոնեանի, փոխադր. Աղամ Սարգսբեանի.

Արխողոմ աղայի դերը կը կատարէ պ. Վրջյր:

Տեղերի գինը սովորականն է:

Սկիզբը երեկոյեան 8 ժամին:

(№ 28) 1—2

Կիրակի, մարտի 12-ին 1895 թ.Է

ԵՂԲ. ՆԻԿԻՏԻՆՆԵՐԻ ՅԻՐԱՈՒՄ

Մեր ժամանակի առաջին ձեռնածու Ն. Ա. ԿՈՂԻՎ, կը տայ մեծ, արտասովոր և
փայլուն ներկայացում 20 ՁԻՐ ԸՆԾԱՆԵՐՈՎ, որոնք բազմապիսի են ոսկէ, արծաթէ և
զարանտէրէ յի առարկաներից: Գլխաւոր ընծան է անգլիական ծոցի ժամացոյ-
ցը: Ընծաները կը բաժանեն վարժաված աղաներին: Տոմսակ առնողներին իւրա-
քանչիւրը ձրի կօնարմարկներ կը ստանայ: Սկիզբն է 8 ժամին երեկոյեան: Տոմսակներ
կարելի է ստանալ ցիրկի կասայում: 1—1

Կ Ա Ր Զ Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ո Վ

ՀԱԶՈՒԱԳԻՏ ԲՈՒՍԵՂԷՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Երևանեան հրատարակի վրա, Տէր-Աստուրովի տանը

ԵՂԲ. ՄԱՐԻԳՕ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԲԷԼԳԻՍՅԻՑ
Այդպահանջութիւն, պտղապահութիւն և ծաղկապահութիւն, պատիւ
ունեն ծանուցանել, որ բերել են հազարի քանակութեամբ վաճառելու
համար բուսեղեններ և զանազան տեսակի պտղաբեր ծառեր: Ահազին
քանակութեամբ ծաղկաբուսի և թուփեր: Յանձն են առնում նմա-
նապէս այգեղենութիւն և ծառերի ու թուփերի անկիւր, որոնք կը
գնվին իրանց մօտ: Ստացված են դարձաւ ուրիշ բուսեղեններ:
(№ 24) 5—5



Ն օ Ր Բ ս ց Վ ծ

Ա Լ Ի Ի Ր Ի Պ Ա Հ Ե Ս Տ

ՆԻԿՈՒՍ ԳՐԻԳՈՆՈՎԻ

(Թամաշեանի քարվանսարայ, № 29, Սկիզբի դիմաց)

Վաճառվում է «ԳՐՈՒՊՁԱՏԿԱ» և ԿԱԿՈՒՂ ԱԼԻՐ, ամեն տեսակի, պատրաստած
Ռուսաստանի և տեղական ցորենից, նոյնպէս և մաննայտ կրուպա, Ա. Արամալ-
լիսովի և Ն. Փրիդոնովի (նախկին եղբ. Հախվերդեանների) սեփական վայցովի ջրաղա-
ցից: (№ 28) 2—3

Յանքերը կարկտահարութիւնից փոխադարձ ապահովութեան ընկերութեան վար-
չութիւնը պատիւ ունի յայտնել ի զիտութիւն ընդհանուրի, որ 1895 թ.Է փետրվարի
1-ին տեղի ունեցաւ խաղողի այգիների, ծխախոտի, գայլուկի և ուրիշ յատուկ կուլտու-
րայի բոյսերի II կարգի ապահովացումը ամեն տեղ:

Վարչութեան անդամներ } Ն. Յիրկունով
Գ. Յասինսկի
Դիրէկտորներ } Իշխ. Ֆ. Ուրուսով

Կառավարիչ Վ. Տարգոնսկի

Ընկերութեան տեսուչ պ. Պավէլ Միխայովի Օկուլիչի Մօսկվա գիւղու պատճառով, բոլոր տե-
ղեկութիւնները տալիս է պ. Վաղարշի Գաբիգովի Կարանթարով առաջվան պէս Սեվերսոյա հա-
մարներում, № 25, 12-ից մինչև ցերեկվայ 2 ժամը:

Կառավարիչ Վ. Տարգոնսկի
(№ 23) 3—3

(26 փետ. 5 և 12 մարտ)


Ի Ա Բ Ր Օ Ն Ֆ Օ Ն Բ Բ Ե Ն Ն Ե Ր

Յանձն է առնում ՀԱՇՆԱՊԱՀԱԿԱՆ, ԳՐԱՍԵՆՍԱԿԻ և ԱՌԵՏՐԱԿԱՆ ՄԱՏԱՆՆԵՐ
պահելու գործը ամբողջ տարվայ ընթացքում, ուսուցիչ, ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն
և ուրիշ լեզուներով, ստուգում է զանազան առևտրական և արդիւնաբերական հաստատու-
թիւնների հաշիւները և մատենաները, քննում, փակում, բանում, և կազմում է առևտ-
րական մատեանները, ընդունում է առևտրական մատենաների զանազան թիւրիմացու-
թիւնների քննութիւնը և բացատրութիւնը:

Այն անձինք, որոնք չունեն հաշուապահներ, բայց ցանկանում են
ունենալ կանոնաւոր հաշուապահութիւն, կարող են ունենալ ձեռի ՏԵՂԵ
ԿՈՒԹԻՆՆԵՐ ԻՐԱՆՑ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՅՔԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԿԱՆՏՆԱՌՈՐ ՄԱՏԱՆՆԵՐ: Մա-
տենաներ պահելու համար վերցվում է տարեկան 100 բուրլի և աւելի: Հասցէս. Елизаветин-
ская, № 25, աստիճանական վարչութեան վերին յարկում:

Ուսուցանում է
Հ Ա Շ Ի Ա Պ Ա Հ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ի Ա Ր Ա Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Վճար } Հաշուապահութեան ամբողջ կուրսի համար (2—3 ամիս) 40 ՐՈՒԲԼԻ
} Արադադրութեան տեսական կուրսի համար (2 ամիս) 50 ՐՈՒԲԼԻ
Պարապմունքներ յինում են ամեն օր, երկու ժամկայ ընթացքում: Առա-
ջադեմ պարապմունքների համար ՎԱՅԱՎԱՆՆԵՐ րէալական դպրոցի դիրէկտորից և ուրիշ
անձերից: (№ 16) (2) 50—100



ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒԹԻՒՄ ԴԵՄ
Բժշկական զէպարամէնտից թոյլա-
արված
ՕԼՅԱԿՏՐՈՒՄ ՆՈՒԳԻ-
ԼԻՆ

Մ. Լ. Ժ Ի Ր Մ Ո Ւ Ն Ս Կ Ո Վ

Ծախվում է 40 կոպէկով

Գեղազորական Ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ՝ Թիֆլի-
սում: (№ 22) 4—30